# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՋԵԿՈՒՅՑԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(10-11 մայիսի 2005 թ.)

Գերաշնո՛րհ Սրբազաններ և մեծարգո՛ Տիարք,

Բարձրյալի ողորմած կամքով կրկին ի մի ենք հավաքվել՝ քննության առնելու մեր Սուրբ Եկեղեցու կյանքում առկա խնդիրներն ու ծառացած մարտահրավերները և Տիրոջ առաջնորդությամբ գտնելու դրանց լուծման ու հաղթահարման միջոցները, որով հնարավոր պիտի լինի առավել արդյունավորել մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունը:

Ընկալյալ ավանդույ́թի համաձայն՝ հարկ ենք համարում անդրադառնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2004 թ. գործունեությանը՝ ի մի բերելով այդ ժամանակահատվածում կատարված աշխատանքների արդյունքները, նաև անդրադառնալու չլուծված այն խնդիրներին, որոնք պիտի շարունակեն մնալ առաջիկա տարվա անելիքների և ծրագրերի կազմում:

Ուստի և այժմ ներկայացնենք Մայր Աթոռի գործունեությունն ըստ համապատասխան հանգրվանների:

## Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցնող տարվա ընթացքում, արդեն իսկ պետական ընդունված արարողակարգով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել Հայաստան ժամանած գրեթե բոլոր պետական պաշտոնական պատվիրակությունները: Սուրբ Էջմիածին են եկել նաև սփյուռքահայ բազմաթիվ ուխտավորներ և օտարազգի զբոսաշրջիկներ:

Մայր Աթոռում ընդունել ենք.

Հունվարի 31-ին՝ Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ, դեսպան **Հեյկի Թալվեթիի** գլխավորած պատվիրակությանը:

Փետրվարի 4-ին՝ Հայաստանում Ռումինիայի Հանրապետության նորանշանակ դեսպան **Նիկոլաե Իորդակեին**:

Նույն օրը՝ Հայաստանում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ դեսպան **Վիկտոր Ռոսսին**:

Փետրվարի 5-ին՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի նորանշանակ ղեկավար **Վլադիմիր Պրյախինին**:

Փետրվարի 7-ին՝ Արարատյան Հայրապետական և Արագածոտնի թեմերի երիտասարդաց միությունների և Երևանի Հայորդյաց տների շուրջ 350 սաներին:

Փետրվարի 11-ին՝ ՌԴ Ռոստովի մարզի նահանգապետ **Վլադիմիր Չուբին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Փետրվարի 26-ին՝ Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվության նախարար **Ալի Յունեսին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Մարտի 7-ին՝ շախմատի աշխարհի 10-րդ չեմպիոն **Բորիս Սպասկիին:**

Մարտի 9-ին՝ Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան **Նիկոլոզ Նիկոլոզիշվիլիին:**

Մարտի 10-ին՝ Հունգարիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան **Ֆերենց Կոնտրային:**

Մարտի 13-ին՝ Վրաստանի Հանրապետության նախագահ **Միխայիլ Սահակաշվիլիին:**

Մարտի 17-ին՝ Բուլղարիայի ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ **Սողոմոն Պասսիին:**

Մարտի 25-ին՝ ՌԴ «Վնեշտորգբանկի» վարչության նախագահ **Անդրեյ Կոստինին:**

Ապրիլի 2-ին՝ Լիբանանի Հանրապետության վարչապետ **Ռաֆիկ Հարիրիին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Ապրիլի 4-ին՝ ՀԲԸՄ կենտրոնական վարչության նախագահ **Պերճ Սեդրակյանին,** ով այդ պաշտոնում իր անդրանիկ այցելությունն էր կատարել Մայր Աթոռ:

Ապրիլի 5-ին՝ **«Վասպուրական»** հայրենակցական միության անդամներին, ովքեր ավանդաբար Մկրտիչ Ա Խրիմյան Հայրապետի ծննդյան տարեդարձի օրը այցելում են երջանկահիշատակ Հայրապետի շիրիմին:

Ապրիլի 19-ին՝ կանադահայ աշխարհահռչակ երգչուհի **Իզաբել Բայրաքդարյանին:**

Ապրիլի 21-ին՝ **«Մատենադարանի բարեկամներ»** հիմնադրամի գործադիր տնօրինությանը և Մաշտոցի անվան Մատենադարանի ղեկավարությանը:

Մայիսի 2-ին՝ Օտարերկրյա պետություններում պաշտոնավարող ՀՀ **դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարներին՝** առաջնորդությամբ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի:

Հունիսի 19-ին՝ **Պատգամավորական բարեկամության հայկական վեհաժողովի անդրանիկ նիստի մասնակիցներին,** որոնց թվում են՝աշխարհի տարբեր երկրների խորհրդարանների հայազգի պատգամավորներն ու այդ երկրների խորհրդարաններում Հայաստանի ԱԺ-ի հետ բարեկամության պատգամավորական խմբերում ընդգրկված ներկայացուցիչները:

Հունիսի 22-ին՝ «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի անդամներին՝ «Կիլիկիա» առագաստանավով նախատեսվող ծովային ճանապարհորդությունից առաջ:

Հունիսի 28-ին՝ Գրողների համահայկական երկրորդ համաժողովի մասնակիցներին:

Հուլիսի 3-ին՝ ԱՄՆ Փասադենայի քաղաքապետ **Բիլ Բոգաարդին,** քաղաքի ոստիկանապետ Բերնարդ Մելեքյանին և նրանց գլխավորած պատվիրակությանը:

Հուլիսի 5-ին՝ ԵԽԽՎ գլխավոր քարտուղար **Բրունո Հալերի** գլխավորած պատվիրակությանը:

Հուլիսի 9-ին՝ Բելառուսի Հանրապետության Ներքին գործերի նախարար **Վլադիմիր Նաումովին:**

Հուլիսի 14-ին՝ Միացյալ Աստվածաշնչային Ընկերությունների թարգմանական խորհրդատու վերապատվելի **Մանվել Ջինբաշյանին**, որին հանձնել ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Հուլիսի 15-ին՝ Երևանի եկեղեցիներին կից գործող երիտասարդաց միությունների, ՀՀ պարբեր բուհերի ուսանողական միությունների, հասարակական, քաղաքական կազմակերպությունների և կուսակցությունների երիտասարդական թևերը ներկայացնող շուրջ 50 երիտասարդներին՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի գլխավորությամբ:

Հուլիսի 19-ին՝ Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Հանս Վուլֆ Բարթելսին**:

Հուլիսի 22-ին՝ Մայր Աթոռից Մեր բացակայության ընթացքում Վանական խորհրդի նախագահ, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանն ընդունել և Մեր ողջույններն ու բարեմաղթանքներն է փոխանցել Վրաստանի Հանրապետության ԱԳ նախարար **Սալոմե Զուրաբիշվիլիին:**

Օգոստոսի 3-ին՝ Մայր Աթոռում ընդունել ենք՝ ՌԴ Կոմի Հանրապետության նախագահ **Վլադիմիր Տորլոպովին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Օգոստոսի 4-ին՝ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան **Ալի Ռեզա Հաղիղյանին:**

Նույն օրը՝ Հռոմեակաթոլիկ Եկեղեցու Տրենտոյի (Իտալիա) թեմի ուխտավորներին՝ հայր **Պիեռո Ռաթթինի** գլխավորությամբ:

Օգոստոսի 27-ին՝ Դանիայի Թագավորության Արտաքին գործերի նախարար Պեր Ստիգ Մյոլլերին՝ Դանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի ուղեկցությամբ:

Սեպտեմբերի 9-ին՝ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ **Մոհամմադ Խաթամիին;**

Սեպտեմբերի 13-ին՝ Ուկրաինայի ՆԳ նախարար **Նիկոլայ Բիլոկոնին:**

Սեպտեմբերի 14-ին՝ ՀՀ-ում Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան փիկին **Թերի Հակալային՝** Ֆինլանդիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի ուղեկցությամբ:

Նույն օրը՝ Իտալիայի Հանրապետության Խորհրդարանի փոխխոսնակ և Իտալիայի խորհրդարանական խմբի անդամ **Լամբերտո Դինիին՝** Հայաստանում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Նույն օրը՝ ՀՀ-ում ԱՄՆ-ի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան **Ջոն Մարշալ Էվանսին:**

Սեպտեմբերի 15-ին՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Հայկե Փայչիին:**

Սեպտեմբերի 19-ին՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահ **Ռոմանո Պրոդիին:**

Սեպտեմբերի 20-ին՝ Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ **Վիկտոր Շեյմանին՝** ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի ուղեկցությամբ:

Սեպտեմբերի 23-ին՝ ԼՂՀ նախագահ **Արկադի Ղուկասյանին**, ԱԺ նախագահ **Օլեգ Եսայանին**, վարչապետ **Անուշավան Դանիելյանին** և ԼՂՀ կառավարության մի շարք անդամներին:

Նույն օրը՝ ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Տոմաշ Կնոթհեին**:

Նույն օրը՝ ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատար **Փիթեր Նիկոլաուսին**:

Սեպտեմբերի 25-ին՝ Արևմտաեվրոպական միության վեհաժողովի փոխնախագահ, միությունում Իտալիայի պատվիրակության նախագահ **Մարկո Զակերանին**՝ Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Հոկտեմբերի 2-ին՝ ՌԴ Դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ **Սերգեյ Միրոնովին**:

Հոկտեմբերի 6-ին՝ Բուլղարիայի Հանրապետության նախագահ **Գեորգի Պրվանովին**:

Նույն օրը՝ բրազիլացի արձակագիր **Պաոլո Կոելյոյին**:

Նույն օրը՝ ԱՄՆ Միջխորհրդարանական վեհաժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամներին:

Հոկտեմբերի 10-ին՝ Նորվեգիայի Թագավորության Արտաքին գործերի նախարար **Յան Պետերսոնին**՝ Նորվեգիայի Թագավորությունում ՀՀ դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի և ՀՀ-ում Նորվեգիայի Թագավորության պատվո հյուպատոս Տիմոթի Սթրեյթի ուղեկցությամբ:

Հոկտեմբերի 19-ին՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Արտաքին գործերի նախարար **Լի Չժաոսինին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Հոկտեմբերի 22-ին՝ Միջխորհրդարանական համագործակցության բրիտանական խմբի անդամներին՝ Մեծ Բրիտանիայի խորհրդարանի համայնքների պալատի պատգամավոր **Գորդոն Մարսդենի** գլխավորությամբ:

Հոկտեմբերի 27-ին՝ ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ **Ռոբերտ Ամիրխանյանին**:

Նոյեմբերի 2-ին՝ «Կիլիկիա» առագաստանավի անձնակազմի անդամներին:

Նոյեմբերի 3-ին՝ ՌԴ «Ռուսաստանյան երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության նախագահ **Գենադի Ֆադեևին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Նոյեմբերի 16-ին՝ Էստոնիայի Հանրապետության նախագահ **Առնոլդ Ռյույտելին** և իր գլխավորած պատվիրակությանը:

Դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռում ընդունել ենք ՌԴ պետական և հասարակական, մշակութային ճանաչված գործիչ **Իոսիֆ Կոբզոնին** և շնորհել «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը:

Նույն օրն ընդունել ենք Վրաստանի առաջին տիկին **Սանդրա Եղիսաբեթ Ռուլովսին**:

Դեկտեմբերի 8-ին՝ «Արևելյան խորհրդաժողովի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում Թուրքիայից Հայաստան ժամանած շուրջ երեսուն մտավորականներին՝ ուղեկցությամբ «Ակոս» և «Ժամանակ» թերթերի գլխավոր խմբագիրներ Հակոբ Դինքի և Արա Գոչունյանի:

Դեկտեմբերի 15-ին՝ ՌԴ Պետական Դումայի նախագահ **Բորիս Գրիզլովին**:

Ընթացիկ տարում Հայրապետական այցելություններ ենք կատարել ՀՀ պետական իշխանության տարբեր կառույցներ, գիտակրթական, մշակութային հաստատություններ ու ներքին թեմեր:

Հովվապետական այցելության ենք մեկնել. մայիսի 4–25-ը՝ Հարավային Ամերիկայի հայոց թեմեր՝ Բրազիլիա, Ուրուգվայ և Արգենտիա, հունիսի 10–14-ը՝ Մեծ Բրիտանիայի հայոց թեմ և սեպտեմբերի 6-9-ը՝ Գուգարաց թեմ:

Կատարել ենք նաև միջեկեղեցական այցելություններ: Հունիսի 2–6-ը, Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի հրավերով պատասխան այցով մեկնեցինք Ֆինլանդիա, իսկ հունիսի 10–14-ին՝ Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոուան Ուիլյամսի հրավերով՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:

Նշենք նաև, որ անցնող տարվա մարտի 2–4-ը Մոսկվայում մասնակցել ենք ԱՊՀ միջկրոնական խաղաղարարական 2-րդ ներկայացուցչական ժողովին:

Մեր հերթին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալել ենք Լիոնի Արքեպիսկոպոս **Ֆիլիպ կարդինալ Բարբարենին** և նրա գլխավորած պատվիրակությանը:

## Բ. ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուրախությամբ արձանագրում ենք, որ անցյալ տարում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին համալրվել է 27 սպասավորներով, որոնցից 23-ը՝ ամուսնացյալ, իսկ 4-ը՝ կուսակրոն քահանաներ: Մասնավոր կերպով ցանկանում ենք շեշտել Մայր Աթոռի հովանու ներքո գործող Քահանայից երկամյա լսարանի դասընթացներին հետևողներից թվով 13 հոգու քահանայական ձեռնադրությունը ճեմարանավարտ 9 սարկավագների հետ միասին, որոնց, քառասնօրյա պատրաստության շրջանը բոլորելուց հետո, 19 ձեռնադրյալ հոգևորականներին ծառայության կոչեցինք Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում, Արարատյան Հայրապետական, Շիրակի, Արագածոտնի, Արցախի, Գուգարաց, Գեղարքունյաց և Կոտայքի թեմերում:

Սեպտեմբերի 26-ին կատարել ենք Մայր Աթոռի Դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանի եպիսկոպոսական ձեռնադրության և օծման սրբազան արարողությունը:

Եկեղեցագիտական և աստվածաբանական կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու համար Մայրավանքի միաբաններից արտասահման ենք ուղարկել՝

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանին,

Հոգեշնորհ Տ. Շնորհք աբեղա Սարգսյանին,

Բարեշնորհ Գոռ սարկավագ Գևորգյանին,

Բարեշնորհ Ծերուն սարկավագ Մկրտչյանին:

Լեզվագիտության մեջ հմտանալու համար Մեր փնօրհնությամբ մի քանի ամսով արտերկիր են մեկնել Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Մանույանը և Հոգեշնորհ Տ. Հովնան աբեղա Հակոբյանը:

Մայր Աթոռի վանաբնակ միաբանների ընդհանուր թիվն այժմ 63-ն է, որոնցից 7-ը՝ արքեպիսկոպոս ու եպիսկոպոս, 24-ը՝ վարդապետ ու աբեղա, ներառյալ Մայր Աթոռին ենթակա վանքերի վանահայրերը և 32 սարկավագ:

Ընթացիկ փարում, համաձայն իրենց դիմումների, հոգևոր ծառայությունից հրաժարվել և կամ կարգազանցությունների ու դասալքությունների պատճառով Հայրապետական Մեր վճռով կարգալույծ են հռչակվել ու ի շարս աշխարհականաց դասվել

Տ. Մաշտոց աբեղա Ժոռոյանը,

Տ. Պսակ աբեղա Մուրադյանը:

Տ. Արարատ քահանա Հովսեփյանը,

Տ. Նարեկ քահանա Ահարոնյանը,

Տ. Սուքիաս քահանա Տերտերյանը,

Տ. Կարապետ քահանա Մոլեքյանը,

Տ. Մկրտիչ քահանա Սարիբեկյանը,

Տ. Վահան քահանա Սարիբեկյանը,

Տ. Սահակ քահանա Գալստյանը,

Արկադի սարկավագ Թանդիլյանը,

Մուշեղ սարկավագ Հովհաննիսյանը,

Էդիկ սարկավագ Թովմասյանը,

Համլետ սարկավագ Գրիգորյանը:

Հայրապետական Մեր փնօրհնությամբ կատարել ենք հետևյալ նոր նշանակումները.

Հոգեշնորհ Տ. Արեն աբեղա Շահինյանը՝ Հռոմի հայ համայնքի հոգևոր հովիվ,

Հոգեշնորհ Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը՝ Վիրահայոց թեմում առաջնորդական փոխանորդ,

Հոգեշնորհ Տ. Սասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը՝ Գուգարաց թեմում առաջնորդական փոխանորդ,

Հոգեշնորհ Տ. Եփրեմ աբեղա Սարգիսյանը՝ Արագածոտնի թեմում որպես հոգևոր հովիվ,

Հոգեշնորհ Տ. Սահակ աբեղա Շաքարյանը՝ Գուգարաց թեմում որպես հոգևոր հովիվ,

Հոգեշնորհ Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը՝ Կանադայի հայոց թեմում որպես հոգևոր հովիվ,

Հոգեշնորհ Տ. Մակար աբեղա Հակոբյանը՝ Գուգարաց թեմում որպես հոգևոր հովիվ:

Մայրավանքում և Մայր Աթոռի բաժիններում, ենթակա վանքերում ու կառույցներում անցնող փարում ներգրավված են եղել որոշ հոսունությամբ շուրջ 2300 աշխատողներ: Շինարարական և գործարքային աշխատանքներում զբաղված են եղել նաև ժամանակավոր աշխատողներ:

## Գ. ՆԵՐԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

### 1. Հոգևոր-եկեղեցական գործունեություն

Տիրոջ ողորմությամբ և մեր հավատավոր ժողովրդի բարերար զավակների աջակցությամբ շարունակվում են եկեղեցաշինական աշխատանքները:

Անցյալ տարի ուրախությունն ու հոգևոր բերկրանքն ենք ունեցել կատարելու՝ հունիսի 20-ին Արագածոտնի թեմի Չքնաղ գյուղի նորակառույց Սուրբ Ստեփաննոս եկեղեցու (բարերարներ՝ Տեր և Տիկին Գառնիկ և Անժելա Հովսեփյաններ), օգոստոսի 24-ին՝ Ուկրաինայի հայոց թեմում Խարկով քաղաքի նորակառույց Սուրբ Հարություն եկեղեցու (կառուցվել է ժողովրդական հանգանակությամբ) և դեկտեմբերի 9-ին՝ Գուգարաց թեմի Արևաշող գյուղի նորակառույց Սուրբ Աստվածածին (բարերար՝ Ուկրաինայից Տիար Սամվել Աղամյան) եկեղեցու օծման ու սրբագործման արարողությունները: Հոկտեմբերի 16-ին Մեր հանդիսապետությամբ և մասնակցությամբ Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի՝ կատարել ենք Մոսկվայի Սուրբ Խաչ հայոց առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքը, իսկ նոյեմբերի 9-ին Մեր հանդիսապետությամբ տեղի է ունեցել քաղաքամայր Երևանի Հարավ-Արևմտյան թաղամասի նորակառույց Սուրբ Երրորդություն եկեղեցու խաչերի օծման սրբազան արարողությունը:

Մայր Աթոռի Վարչակազմակերպական գործերի կառավարիչ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի ձեռամբ սեպտեմբերի 12-ին վերաօծվել է Արագածոտնի թեմի Կարմրավոր Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը 7-րդ դարի սրբավայր է, հայ ճարտարապետության գոհարներից մեկը: Եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքները կատարվել են ամերիկաբնակ բարերար Հովհաննես Մկրյանի անմիջական աջակցությամբ:

Գոհունակությամբ արձանագրում ենք, որ հաշվետու տարում, օգոստոսի 5-ին, մասնակցությամբ ամերիկահայ բարերարներ Տեր և Տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների, կատարել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնովին վերանորոգված շենքի բացման արարողությունը, իսկ հոկտեմբերի 5-ին՝ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում նոր մասնաշենքի բացման արարողությունը: Հարմարավետ կացարաններով, դահլիճով և այլ ընդարձակ սրահներով եռահարկ մասնաշենքը կառուցվել է դամասկոսաբնակ Տեր և Տիկին Գառնիկ և Անի Ցակուբյանների բարերարությամբ:

Հոգևոր կյանքին նորոգ զորություն է հաղորդում Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնի առիթով բարի ավանդույթ դարձած՝ Մայր Աթոռում հրավիրվող ամենամյա քահանայից հավաքը, որին Մեր նախագահությամբ մասնակցում են Հայաստանի և Արցախի թեմակալ առաջնորդներն ու քահանայից դասը:

Ընթացիկ տարում Մեր կողմից տրվել է 59 Հայրապետական կոնդակ, ընդ որս և երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի մահվան 10-րդ տարելիցի և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակի առիթներով, ինչպես նաև 125 օրհնության գիր: Նշեք նաև, որ ըստ անհրաժեշտության ողջույնի և Հայրապետական օրհնության խոսքեր են ասվել ու հղվել միջեկեղեցական հանդիպումների և մի շարք հանդիսությունների, միջոցառումների, գիտաժողովների և այլ առիթներով:

**2. Հասարակական-մշակութային գործունեություն**

Մայր Աթոռս շարունակում է իր գործուն մասնակցությունը Հայաստանի գիտամշակութային ու հասարակական կյանքին: Անցյալ տարում Մայր Աթոռում ընդունել ենք հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների, ակադեմիական ու բուհական համակարգերի, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների: Մենք ևս այցելություններ ենք կատարել քաղաքամայր Երևանի ու Հայաստանի մարզերի մի շարք գիտամշակութային և կրթական հաստատություններ:

Մասնավորապես ցանկանում ենք հիշատակել նոյեմբերի 18-ին Մեր այցելությունը Երևանի Պետական Համալսարան, որտեղ հանդիպեցինք Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ:

Ընթացիկ տարում Մայր Աթոռում և Վեհարանի հանդիսությանց դահլիճում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

· Ապրիլի 21-ին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով պարգևատրել ենք անվանի երգահաններ Ալեքսանդր Հարությունյանին և Տիգրան Մանսուրյանին:

Հուլիսի 10-ին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով պարգևատրել ենք մոսկվաբնակ բարերար Վիտալի Գրիգորյանցին:

Հուլիսի 14-ին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան ենք հանձնել Միացյալ Աստվածաշընչային Ընկերությունների թարգմանական խորհրդատու վերապատվելի Մանվել Ջինբաշյանին:

Օգոստոսի 30-ին Վեհարանի հանդիսությունների սրահում «Լավագույն ուսուցիչ-2004» մրցույթին մասնակցած տարբեր առարկաների գծով 53 ուսուցիչների հանձնել ենք վկայականներ և դրամական պարգևներ:

Սեպտեմբերի 2-ին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով պարգևատրել ենք ՌԱԿ լիբանանյան մասնաճյուղի «Զարթոնք» պաշտոնաթերթի խմբագիր Պարույր Աղբաշյանին՝ գրական, մանկավարժական և լրագրողական գործունեության 30-ամյա տարեդարձի առիթով:

Հոկտեմբերի 20-ին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրել ենք Գերմանահայոց թեմի մշակութային հանձնախմբի ատենապետ Ալբերտ Սևինչին:

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մեր հանդիսապետությամբ տեղի ունեցավ «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նգրափակիչ նիստը, որի ընթացքում ընթերցվեց Մեր կոնդակը՝ «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի եռամյա գործունեության առիթով:

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մեր հանդիսապետությամբ մեծահանդես նշվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնադրման 130-ամյա հոբելյանը:

Նոյեմբերի 15-ին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձր շքանշանով պարգևատրել ենք գեղանկարիչ Էդուարդ Իսաբեկյանին, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանին, Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանին և գրող Կարպիս Սուրենյանցին:

Նշենք նաև, որ Մայր Աթոռի կողմից նոյեմբերի 6-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակին նվիրված հանդիսության, իսկ դեկտեմբերի 18-ին երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի մահվան 10-րդ տարելիցի կապակցությամբ հուշ-երեկո է կազմակերպվել Երևանի Արամ Խաչատրյանի անվան Ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում:

Սեպտեմբերի 18–19-ը Գրողների միության Ծաղկաձորի ստեղծագործական տանը, Մեր օրհնությամբ և հովանավորությամբ Կեչառիսի վանքի բարերար Վլադիմիր Հարությունյանի, տեղի ունեցավ գիտաժողով-հանդիսություն՝ նվիրված Կեչառիսի վանքի 1000-ամյակին: Իսկ սեպտեմբերի 22-ին՝ Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի պանծալի հոբելյանի շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Հայ մեկնողական գրականության դպրոցները» թեմայով գիտաժողովը, որին մասնակցում էին ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից հրավիրյալ շուրջ 25 գիտության մշակներ:

**3. Քարոզչական-հրատարակչական գործունեություն**

Այս ոլորտում կարևոր առաքելություն է իրականացնում ՔԴԿ-ն, որն իր մասնաճյուղերն ունի Հայաստանի բոլոր թեմերում և Արցախում:

Անցյալ տարում ևս բաժինը շարունակել է մարզերի հանրակրթական դպրոցներին բաշխել «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերը, ինչպես նաև աջակցել այդ առարկայի ուսուցիչներին՝ նրանց համար կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ:

ՔԴԿ-ի կողմից վերահրատարակվել են 33 անուն քարոզթերթիկներ, հրատարակվել կամ վերահրատարակվել են մի քանի անուն գրքեր, որոնցից հիշենք հետևյալները.

ա. Պողոս Պատրիարք Աղրիանապոլսեցի, «Խրատի թանգարան», Սուրբ Էջմիածին, 2004 թ. (վերահրատարակություն),

բ. «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք ԺԲ (Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան), Սուրբ Էջմիածին, 2004 թ.,

գ. «Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը և Իր ժամանակը» (Գիտաժողովի նյութեր), Սուրբ Էջմիածին, 2004 թ.,

դ. Խոսրով (Գէորգ) քահանայ Շաքարեան, «Յիշատակարան կամ ընտանեկան արձանագրութիւն վանեցի Շաքարեան Տան», Սուրբ Էջմիածին, 2004 թ.,

ե. Արշակ վարդապետ Խաչատրյան, «Նվիրակությունը Հայոց Եկեղեցում», Սուրբ Էջմիածին, 2004 թ.,

զ. «Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Սուրբ Էջմիածին, 2004 թ. :

## Դ. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակը իր գործունեության շրջագծում իրականցրել է Մայր Աթոռի կապը քույր Եկեղեցիների, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և եկեղեցական ու միջեկեղեցական տարբեր կազմակերպությունների հետ: Բաժինն իր գործուն մասնակցությունն է ունեցել ինչպես Հայաստանում, այնպես և արտերկրում կազմակերպված միջեկեղեցական հետևյալ հավաքներին ու գիտաժողովներին.

Հունվարի 27–30-ը Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները հանդիպեցին Կահիրեում՝ որպես անդամներ Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև երկխոսության միջազգային հանձնախմբի՝ համանախագահությամբ Քրիստոնեական Միության Խրախուսման Պապական Խորհրդի նախագահ Գերաշնորհ Կարդինալ Վալտեր Կասպերի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի Գլխավոր Քարտուղար և Դամիետի Մետրոպոլիտ Անբա Բիշոյի: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին այդ երկխոսությանը ներկայացրեցին՝ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, Հոգեշնորհ Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը (անձնափոխանորդ) և Հոգեշնորհ Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը (դիտորդ):

Հունիսի 4–8-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) կենտրոնական գրասենյակում, կայացավ Էկումենիկ պաշտոնյաների հանդիպումը, որին մասնակցում էին շուրջ երկու տասնյակ Էկումենիկ պաշտոնյաներ տարբեր Եկեղեցիներից և Էկումենիկ կազմակերպություններից: Այդ հանդիպմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը:

Հունիսի 25–27-ը Գերմանիայի Լութերշտադտ Վիտենբերգ քաղաքում տեղի ունեցավ եկեղեցաբանության վերաբերյալ խորհրդակցություն, որը կազմակերպել էին Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը և Եվրոպայի Բողոքական Եկեղեցիների Ընկերակցությունը: Հանդիպմանը Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Հուլիսի 28-ից օգոստոսի 6-ը տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի լիագումար նիստը Մալայզիայի մայրաքաղաք Կուալա-Լումպուրում: Որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ՝ նիստին մասնակցեց Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը (1999 թվականից «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի անդամ):

Սեպտեմբերի 20–22-ը կայացավ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի ընդլայնված նիստը Բրյուսել քաղաքում: Հանդիպմանը մասնակցում էին ԵԵԿ անդամ Եկեղեցիների «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբերի ավելի քան երեք տասնյակ ներկայացուցիչներ: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին սույն ժողովին ներկայացնում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը:

Սեպտեմբերի 27–ից հոկտեմբերի 3-ը Պրագայում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) Կենտրոնական Կոմիտեի հանդիպումը: Նշենք, որ ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանն է:

Սեպտեմբերի 12–18-ը Բոզեի վանքում (Իտալիա) տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիներին նվիրված Միջազգային Էկումենիկ 12-րդ համագումարը: Երկու գիտաժողով-նստա-

շրջաններին մասնակցեցին ավելի քան 200 ներկայացուցիչներ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացրեց Հոգեշնորհ Տ. Զատիկ վարդապետ Ավետիքյանը:

Սեպտեմբերի 20–29-ը Հռոմում տեղի ունեցավ Բենեդիկտյան միաբանության աբբաների վեհաժողովը՝ մասնակցությամբ Եվրոպայի և աշխարհի զանազան շրջաններից հայրերի վեհաժողովը՝ մասնակցությամբ Եվրոպայի և աշխարհի զանազան շրջաններից ժամանած շուրջ 160 ժողովականների՝ Տիեզերական Պատրիարքությունից, Հայ Առաքելական, Հույն Ուղղափառ, Ռումին Ուղղափառ, Անգլիկան և այլ Եկեղեցիներից: Այդ վեհաժողովին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ներկայացրեց Հռոմի հայ համայնքի հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Արեն աբեղա Շահինյանը:

Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Հունաստանի Հռոդոս կղզում կազմակերպված «Քաղաքակրթությունների երկխոսություն» համագումարին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը: Համագումարին մասնակցում էին շուրջ 380 ներկայացուցիչներ աշխարհի 40 երկրներից:

Հոկտեմբերի 1-ին Թբիլիսիում տեղի ունեցավ «Գլոբալիզացիա և Քաղաքակրթությունների Երկխոսություն» միջազգային համաժողովը, որին մասնակցում էին ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Հնդկաստանից, Հարավային Կովկասի, Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի երկրներից: Համաժողովի աշխատանքներին, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, իր գործուն մասնակցությունն է բերել և «Գլոբալիզացիա, քաղաքակրթություն և բարոյականություն» թեմայով հանդես եկել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հոկտեմբերի 22–23-ին Ակուիլեայում (Իտալիա) տեղի ունեցավ միջեկեղեցական համագումար, որին ներկա էին ներկայացուցիչներ Կաթոլիկ, Ռուս, Ռումին, Հույն Ուղղափառ և Բողոքական Եկեղեցիներից: Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներից մասնակցում էր միայն Հայ Առաքելական Եկեղեցին՝ հանձին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Տաթև եպիսկոպոս Ծերեճյանի:

Նոյեմբերի 4–7-ը Եվրոպական 12 Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ Մինսկում տեղի ունեցավ Քրիստոնյա Մարդկանց Եվրոպական Ֆորումի Եվրոպական Կոնֆերանսը, որին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Հոգեշնորհ Տ. Նշան աբեղա Պետրոսյանը:

Նոյեմբերի 11–13-ը Հռոմի մոտակայքում գտնվող Ռոկա դի Պապա քաղաքում տեղի ունեցավ միջազգային կոնֆերանս՝ նվիրված Վատիկանի Բ Ժողովի "Unitatis Redintegratio" հրամանագրի 40-ամյակին: Փաստաթուղթը սահմանում է, թե ինչպիսին պետք է լինեն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հարաբերությունները քրիստոնեական մյուս Եկեղեցիների հետ: Մինչև այսօր միջքրիստոնեական կապերի համար պատասխանատու կաթոլիկ կառույցներն առաջնորդվում են այդ փաստաթղթով: Կոնֆերանսին, բացի աշխարհի տարբեր երկրների կաթոլիկ թեմերի եպիսկոպոսներից ու հոգևորականներից, մասնակցում էին նաև քրիստոնեական տարբեր Եկեղեցիների ու միջազգային քրիստոնեական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հայ Առաքելական Եկեղեցին այդ կոնֆերանսին ներկայացնում էր Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը:

Նոյեմբերի 26–27-ը Բրյուսելի Էկումենիկ կենտրոնում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Խաղաղություն, Անվտանգություն և Հաշտություն» աշխա-

փանքային խմբի հանդիպումը, որտեղ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Մայր Աթոռի աշխատակից, երեցկին Փոլա Դևեջյանը:

Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը Ժնևում Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը կազմակերպել էր միջեկեղեցական հանդիպում՝ «Էկումենիկ շարժման վերակազմավորումը» թեմայով: Միջոցառմանը ներկա են եղել ավելի քան 100 մասնակիցներ Հին Արևելյան Ուղղափառ, Կաթոլիկ և բողոքական Եկեղեցիներից: Միջոցառմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարցերով պատասխանատու Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը:

Դեկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը Մոսկվայի Պատրիարքարանի ուխտագնացությունների կենտրոնում, որպես ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի գործադիր կոմիտեում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, մասնակցեց ԱՊՀ երկրների Միջկրոնական Խորհրդի (ԱՊՀ ՄԽ) գործադիր կոմիտեի առաջին նիստին, ուր քննարկվել են ԱՊՀ Միջկրոնական Խորհրդի գործունեության ընթացիկ հարցերը և ընդունվել այդ կառույցի գործունեության հրամայականները:

Դեկտեմբերի 8–9-ը երկօրյա աշխատանքային այցով Մոսկվայում է եղել Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: Դեկտեմբերի 8-ին Գերաշնորհ Սրբազան Հայրը հանդիպել է Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Սմոլենսկի և Կալինինգրադի Միտրոպոլիտ Կիրիլի հետ:

Ընթացիկ տարվա նոյեմբերի 24-ին չորսօրյա այցելությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են եկել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի երկու աշխատակիցներ՝ Ալեքսանդր սարկավագ Վասյուտինը (ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեի անդամ) և Դոկտոր Սերգեյ Գովորունը (ԵՀԽ «Հավատք և կարգ» հանձնախմբի անդամ և Մոսկվայի Հոգևոր Ակադեմիայի դասախոս):

Այցելության ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր Հայ և Ռուս Եկեղեցիների միջև երկխոսությունների վերսկսման, թեմաների, հանդիպման վայրի ու ժամանակի վերաբերյալ (երկխոսությանց առաջին փուլը տեղի է ունեցել 2000 և 2001 թթ.): Քննարկումներին մասնակցել են նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը և ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

## Ե. ՀՈԳԵՎՈՐ - ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Գևորգյան Հոգևոր Ճեմարան

Անցյալ տարին հոբելյանական էր Ճեմարանի կյանքում. Մայր Աթոռում մեծահանդես տոնախմբեցինք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակը, որին մասնակցություն բերեցին Հայրենի Կառավարության ներկայացուցիչներ, ԲՈՒՀ-երի ռեկտորներ, կրթության ու մշակութային գործիչներ: Ճեմարանի հոբելյանին նվիրված եզրափակիչ հանդիսությունը տեղի ունեցավ քաղաքամայր Երևանում՝ Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ մեծ համերգասրահում՝ մասնակցությամբ հարյուրավոր հանդիսականների:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչն է Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը՝ օգնականներ ունենալով փոխտեսչին, վերակացուներին և ճեմարանի քարտուղարին: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմում ընդգրկված են 41 դասախոս, որոնցից 17-ը՝ հոգևորական, և 24-ը՝ աշխարհական: Դասախոսներից 15-ը գիտության դոկտորներ ու թեկնածուներ են:

2004–2005 թթ. ուսումնական տարում Գևորգյան Հոգևոր Ճեմարան ընդունվեցին 34 սաներ, բացի այդ՝ այստեղ փոխադրվեցին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի Ե լսարանի սաները և Գյումրիի Հոգևոր Ընծայարանի 7 ուսանողներ, որով Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ունեցավ 161 ուսանող, որոնցից 34-ն ուսանում են երկու Ա լսարաններում, 10-ը՝ Բ լսարանում, 25-ը՝ երկու Գ լսարաններում, 30-ը՝ երկու Դ լսարաններում, 44-ը՝ երկու Ե լսարաններում, 18-ը՝ Զ լսարանում:

Ճեմարանի խնդիրներին և ուսումնական գործընթացին ի մոտո ծանոթանալու համար անձնապես մասնակցել ու նախագահել ենք կրթական հաստատության ուսումնական խորհրդի նիստերին և մանկավարժական ժողովներին:

Ճեմարանական ուսումնամեթոդական ու կազմակերպչական աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն են բերում չորս ամբիոնները:

Անցյալ տարվա ընթացքում երեք անգամ կազմակերպվել են ավարտաճառերի պաշտպանություններ, որոնց ընթացքում իրենց ավարտական աշխատանքները պաշտպանեցին 17 սաներ:

Ճեմարանականները մասնակցել են այլ ուսումնական հաստատություններում կազմակերպված միջոցառումներին, հանդիպումներին, ժողովներին:

Նշենք նաև, որ ուսումնառությանը զուգընթաց ճեմարանի սաները կանոնավոր կերպով մասնակցել են ժամերգություններին և Սուրբ Պատարագի արարողություններին ինչպես Մայր Տաճարում, այնպես և քաղաքամայր Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե և Ս. Շողակաթ վանքերում և Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում:

**2. Վազգենյան Հոգևոր Դպրանոց**

2004 թ. հոկտեմբերի 1-ի Հայրապետական տնօրինությամբ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում կատարեցինք տեսչի փոփոխություն. Դպրանոցի տեսչի պաշտոնակատար Արժանապատիվ Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանի փոխարեն Դպրանոցի տեսչի պաշտոնակատար նշանակեցինք Հոգեշնորհ Տ. Մկրտիչ աբեղա Պռոշյանին:

Դպրանոցում դասախոսում են 23 դասախոսներ, որոնցից 9-ը՝ հոգևորական, և 14-ը՝ աշխարհական:

Աշխարհական դասախոսները ինչպես Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, այնպես էլ այստեղ Երևանի Պետական Համալսարանի և բարձրագույն ուսումնական այլ հաստատությունների դասախոսներ և գիտաշխատողներ են:

2004–2005 ուստարվա ընդունելության ընթացքում Դպրանոցի Ա լսարան ընդունվեց 18 ուսանող: Ներկայումս Դպրանոցում ուսանում են 62 ուսանողներ:

Դպրանոցի ուսանողները շարունակում են իրենց կարևոր մասնակցությունը բերել Մայր Աթոռի, Գեղարքունյաց թեմի ու Սևան քաղաքի եկեղեցական, մշակութային կյանքին, «Շողակաթ» հեռուստաընկերության հոգևոր հաղորդումներին, թղթակցել եկեղեցական, հանրապետական ու մարզային պարբերականներին:

Անցյալ տարում ևս Վազգենյան Հոգևոր Դպրանոցում հյուրընկալվել են բազմաթիվ հոգևոր ու աշխարհական բարձրաստիճան հյուրեր, հայրենաբնակ, սփյուռքահայ և օտարազգի ուխտավորների ու զբոսաշրջիկների խմբեր:

**3. Գյումրիի Հոգևոր Ընծայարան**

Ընթացիկ՝ 2004–2005 ուստարվա առաջին կիսամյակում Գյումրիի Հոգևոր Ընծայարանի 29 սաներ տեղափոխվել են Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց՝ համաձայն Գյումրիի Հոգևոր Ընծայարանի հետ կապված ծրագրի, որով նախատեսվում է Ընծայարանը վերահաստատել Հառիճավանքում: Այժմ կատարվում են կացարանային և լսարանային մասնաշենքերի նախագծային աշխատանքները: Լիահույս ենք, որ Գյումրիի Հոգևոր Ընծայարանի նավակատիքը կատարելու ենք մոտ ապագայում:

**4. Հայորդյաց Տներ**

Հայորդյաց Տների ընդհանուր տեսչի պաշտոնում իր գործունեությունը ջանասիրությամբ շարունակում է Արժանապատիվ Տ. Իսահ քահանա Ղազարյանը:

2003–2004 ուստարվա երկրորդ և 2004–2005 ուստարվա առաջին կիսամյակներում Հայորդյաց Տներում սաների թիվը կազմել է շուրջ 3585 (որոշ հոսունությամբ), համապատասխանաբար՝ Արաբկիրում՝ 800, Նորքում՝ 1300, Մալաթիայում՝ 700, Էջմիածնում՝ 520, Վանաձորում՝ 230, և Մանրանկարչության արվեստի կենտրոնում՝ 35:

Հայորդյաց Տներն ունեն 324 աշխատողներ, որոնցից 12-ն աշխատում են ՀՏ կենտրոնական գրասենյակում, 78-ը՝ Արաբկիրում, 95-ը՝ Նորքում, 69-ը՝ Մալաթիայում, 7-ը՝ Մանրանկարչության արվեստի կենտրոնում, 37-ը՝ Էջմիածնում, և 22-ը՝ Վանաձորում:

2004 թ. լույս են տեսել Հայորդյաց Տների «Ջվարթունք» հանդեսի հերթական համարները (թիվ 6–8):

Հայորդյաց Տներում իրենց արդյունավոր գործունեությունն են շարունակում արվեստի, արհեստագործության, գիտատեխնիկական և սպորտային տարբեր խմբակներ, որոնցում երեխաները մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների հետ ստանում են նաև քրիստոնեական գիտելիքներ ու դաստիարակություն, ճանաչում մեր Սուրբ Եկեղեցին:

Մեզ համար մեծ ուրախություն է արձանագրել, որ յուրաքանչյուր Հայորդյաց Տուն ունի նաև Հայ եկեղեցասեր երիտասարդաց միություն, որոնց անդամները եռանդաշատ կերպով մասնակցում են եկեղեցական տոնախմբություններին, միջոցառումներին, ձեռնարկներին, ինչպես և հանդես գալիս եկեղեցանվեր ու ազգօգուտ զանազան նախաձեռնություններով: Հայորդյաց Տների սաները անցյալ տարվա ընթացքում համերգային ելույթներով, թատերական ներկայացումներով մասնակցել են տարբեր միջոցառումների, հանդիսությունների

և փառատոների, նաև՝ բազմաթիվ ռադիո-հեռուստատեսային հաղորդումների, թղթակցել տարբեր թերթերի ու ամսագրերի:

Կուզենայինք առանձնացնել, որ ՀՏ-երի սաները անցյալ տարի մասնակցել են Լեհաստանի Տորուն քաղաքում կայացած «Միշտ կանաչ, միշտ կապույտ» խորագիրը կրող մանուկների ու պատանիների գեղարվեստական գործունեության 12-րդ միջազգային մրցույթին և Թեհրանում կայացած մանկական արվեստի (նկարչություն) 3-րդ միջազգային ցուցահանդես-մրցույթին: Գոհունակությամբ տեղեկացնում ենք, որ մեր երեխաներն արժանացել են բարձր պարգևների՝ 1 ոսկե, 2 արծաթե, 2 բրոնզե մեդալների և 9 խրախուսական մրցանակների:

ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հրավերով անցնող սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը Նորքի Հայորդյաց Տան «Նորք» կրկեսի խմբի սաները Մոլդովայում մասնակցեցին ԱՊՀ երկրների երկրորդ «Դելֆիքյան խաղերին» և արժանացան 1 ոսկե ու 1 արծաթե մեդալների:

Տարվա հիշարժան միջոցառումներից էր ՀՏ-երի սաների, ՀԵԵՄ-ի անդամների և Սփյուռքից ժամանած «Մանուկյան-Դեմիրճյան» վարժարանի շրջանավարտների՝ ինտերնետային տեսակապի միջոցով հանդիպումը Լոս Անջելեսի «Մանուկյան-Դեմիրճյան» վարժարանի սաների ու նրանց ծնողների հետ:

Ավանդույթ է դարձել ՀՏ-երի սաների ամառային հանգստի կազմակերպումը: Անցյալ տարի ևս օգոստոսի 10–24-ը Հայորդյաց Տների 470 սաներ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի աջակցությամբ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Աղվերանի «Նարինե» ճամբարում:

### 5. Հայ Առաքելական Եկեղեցու Երիտասարդական կենտրոն

2004 թ. դեկտեմբերի 15-ի տնօրինությամբ Երիտասարդական Կենտրոնի տնօրեն ենք նշանակել Տ. Ջոհրապ աբեղա Կոստանյանին՝ Բարեշնորհ Մանուկ սարկավագ Ղալաչյանի փոխարեն: Հոգեշնորհ Հայր Սուրբին միաժամանակ նշանակել ենք Համալսարանական ուսանողների հոգևոր հովիվ:

Հաշվետու տարում Կենտրոնին անդամակցել են ավելի քան 60 երիտասարդներ: Բացի Կենտրոնում գրանցված անդամներից, գրասենյակ են հաճախում նաև տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողներ և երիտասարդաց միությունների անդամներ:

2004 թ. ընթացքում Կենտրոնը կազմակերպել ու իրականացրել է կրթական, սոցիալական տարբեր ծրագրեր, ուխտագնացություններ, երեկոներ և այլ միջոցառումներ:

Կրթական ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են՝ Աստվածաշնչի համակարգյալ ուսումնասիրություն, Ս. Պատարագի դպրաց բաժնի երգեցողության ուսուցում և «Զրույց հոգևորականի հետ» խորագրով հանդիպումներ: Կենտրոնի անդամների համար պարբերաբար կազմակերպվել են նաև զանազան թեմաներով սեմինար-դասախոսություններ:

Սոցիալական ծրագրերի շրջանակներում հիմնականում կազմակերպվել են այցելություններ ծերանոցներ, մանկատներ և գիշերօթիկ օժանդակ դպրոցներ:

## Զ. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ «ԳԱՐԵԳԻՆ Ա» ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Խնդրո առարկա ժամանակամիջոցում Մայր Աթոռի թանգարաններ են այցելել Սուրբ Էջմիածին ժամանած բազմաթիվ ուխտավորներ, ինչպես նաև՝ հյուրեր, ներկայացուցիչներ ու պատվիրակություններ: Վերջիններիս թվում են Հայաստան պաշտոնական այցելությունների ընթացքում Մայր Աթոռ այցելած գրեթե բոլոր պատվիրակությունները:

Տևական նորոգչական աշխատանքները շարունակվում են Մայր Տաճարի թանգարանի երրորդ սրահում. պատի այդ մասն ամբողջությամբ պետք է վերանորոգվի և ջրամեկուսացվի:

Մայր Աթոռի թանգարանային արժեքները նկարագրելու, հաշվառելու և այնուհետև այդ փվյալները համակարգչայնացնելու նպատակով ստեղծել ենք մի հանձնախումբ, որը բարեխաչող կերպով կատարեց և շարունակում է իրագործել այդ աշխատանքները: Նախատեսված է գործընթացն ավարտել մինչև 2006 թվականի երկրորդ կիսամյակ:

«Գարեգին Ա» աստվածաբանական-հայագիտական կենտրոնը տևավին գտնվում է Գանձատան շենքում: Կենտրոնի տնօրենն է պատմական գիտությունների դոկտոր, ԳՀԽ անդամ Ազատ Բոզոյանը: Կենտրոնը ներկայումս ունի 3 աշխատակից, ընդ որս՝ 1 սարկավագ:

Ինչպես հայտնի է, կենտրոնն ունի աշխատանքի երկու ուղղություն՝ գրադարանային և գիտական: Անցյալ տարի ևս շարունակվել են գրքերի դասակարգման ու քարտագրման աշխատանքները. սիստեմավորվել է գրադարանի ֆոնդի շուրջ 80 տոկոսը:

Հայոց Եկեղեցու թեմերը և անհատ անձինք իրենց նվիրատվություններով համալրում են կենտրոնի գրքային ֆոնդերը: Կենտրոնի կարևոր ձեռքբերումներից է երջանկահիշատակ հայագետ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս, պրոֆ. Պողոս Խաչատրյանի անձնական գրադարանի հայագիտական հատվածի նվիրատվությունը «Գարեգին Ա» կենտրոնին: Կենտրոնի գրադարանային ֆոնդը, նվիրատվություններից զատ, հարստանում է նաև կառույցի տնօրինության կողմից գրախանութներից գնված անհրաժեշտ գրականությամբ:

Շարունակվում են աշխատանքները գրադարանում գրքերի նկարագրման համակարգչային ծրագրի ներդրման և աշխարհի համանման այլ գրադարանների հետ կապերի հաստատման ուղղությամբ:

Կենտրոնը պահպանում է գիտական կապեր Մաշտոցի անվան Մատենադարանի, ԵՊՀ-ի պատմության և Աստվածաբանության ֆակուլտետների ու ՀՀ Ազգային գրադարանների հետ: Կենտրոնի աշխատանքներին ավանդաբար աջակցում են Մայր Աթոռի միաբաններն ու Հոգևոր Կրթարանների սաները:

Ընթանում են հայ միջնադարյան կանոնական գրականությունը և Հայոց Կաթողիկոսների վավերագիր ժառանգությունը հետազոտող գիտական կառույցի ստեղծման աշխատանքները:

2004 թ. Կենտրոնը Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի հետ համատեղ կազմակերպեց «Հայ մեկնողական գրականության դպրոցները» միջազգային գիտաժողովը.

առաջիկային նախատեսված է լույս ընծայել գիտաժողովի նյութերը: Ծրագրվում է մենագրությունների և պարբերականի հրապարակություն, գիտական սեմինարների կազմակերպում:

## Է. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինչպես հայտնի է, անմիջաբար Մայր Աթոռի ենթակայության ներքո են Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ, Սևանա և Գեղարդա վանքերն ու Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին: Քանի որ Սևանա վանքում է Վազգենյան Հոգևոր Դպրանոցը, ուստի վանական համալիրի գործունեությունն արտահայտվում է Դպրանոցի առաքելագործությամբ:

### Ս. Հռիփսիմե վանք

Վանքում վանահայր Հոգեշնորհ Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանի բարեջան առաջնորդությամբ կանոնավոր կատարվել են եկեղեցական բոլոր արարողությունները: Վանական կյանքից ներս իրենց նվիրյալ ծառայությունն են բերում Սրբոց Հռիփսիմյանց 4 միանձնուհիները՝ կատարելով եկեղեցու և տարածքի մաքրության, մոմավաճառության, խոհանոցի աշխատանքները, ինչպես նաև մասնակցելով եկեղեցական արարողություններին: Կիրակնօրյա Սուրբ Պատարագներին պարբերաբար մասնակցում են նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները:

### Ս. Գայանե վանք

Վանքի վանահայրը Հոգեշնորհ Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանն է: Մեր փնօրինությամբ Ս. Գայանե վանքում իր ծառայագործությունն է շարունակել մեկ աբեղա, ով մնայուն բնակություն է հաստատել վանքում: Այստեղ ևս կանոնավոր կերպով կատարվել են ժամերգությունններն ու մատուցվել Սուրբ Պատարագները, որոնց մասնակցություն են բերել նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները:

Ըստ հարկի կատարվել են նաև մկրտության, պսակի խորհրդակատարություններ, ինչպես նաև այլ ծիսական արարողություններ:

Ս. Գայանե վանքի դպրաց դասի համար վանական միաբանները շաբաթական մեկ օր կազմակերպել են կրոնագիտության, ծիսագիտության և եկեղեցական նրաժշտության դասընթացներ: Բացի Պատարագի քարոզխոսությունից, հոգևոր զրույցներ են կազմակերպվել վանք հաճախող հավատացյալների համար:

### Խոր Վիրապի վանք

Վանքի վանահայրն է Հոգեշնորհ Տ. Ջարեհ վարդապետ Կաքաղյանը: Խոր Վիրապի վանքում նույնպես եկեղեցական բոլոր արարողությունները կատարվել են կանոնավոր կերպով: Ըստ հարկի կատարվել են նաև մկրտության և պսակի խորհրդակատարություններ, ինչպես նաև այլ ծիսաարարողություններ:

Խնդրո առարկա ժամանակահատվածում գրեթե չի դադարել բազմաթիվ ուխտավորների, ինչպես և զբոսաշրջիկների այցելությունները նվիրական այս սրբավայր: Այցելուների

թվում եղել են նաև Հայաստանում պաշտոնական այցով գտնվող մի քանի օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաներ և պատվիրակություններ:

Եկեղեցական մեծ տոների առթիվ կազմակերպվել են հանդիսություններ, որոնց մասնակցություն են բերել Արարատի մարզի մշակութային խմբակները, կազմակերպվել են ցուցահանդեսներ:

Վանքը բարեգործական տարբեր կազմակերպությունների աջակցությամբ շարունակում է նյութական որոշ օգնություն ցուցաբերել սոցիալապես անապահով ընտանիքների:

**Ս. Գեղարդավանք**

Ս. Գեղարդավանքի վանահայրն է Հոգեշնորհ Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը:

Ս. Գեղարդավանքում ևս եկեղեցական արարողությունները կատարվել են անխափան: Ըստ հարկի կատարվել են նաև մկրտություններ, մատաղի օրհնություններ և այլ ծիսաարարողություններ:

·Անցյալ տարում ևս Ս. Գեղարդավանքն ընդունել է բազմաթիվ ուխտավորների, զբոսաշրջիկների և տարբեր խմբերի: Վանք են այցելել նաև Մայր Աթոռի հյուրերն ու Հայաստան ժամանած օտարերկրյա պաշտոնական պատվիրակություններ:

Շարունակվում է տակավին 2001 թվականից սկսված Ս. Գեղարդավանքի և Գերմանիայի Լորշ վանքի միջև հաստատված համագործակցությունը, որը հիմնականում մշակութային բնույթ ունի:

**Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի**

2004 թ. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Սահակ աբեղա Շաքարյանի փոխարեն հոգևոր հովիվ ենք նշանակել Հոգեշնորհ Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանին, իսկ Հոգեշնորհ Տ. Սահակ աբեղա Շաքարյանին հովվության ենք կոչել Գուգարաց թեմում: Մայր եկեղեցում սպասավորում են 6 քահանա և 2 սարկավագ:

Եկեղեցում կանոնավոր կերպով կատարվում են ժամերգությունները և մատուցվում Սուրբ Պատարագ: Յուրաքանչյուր երեքշաբթի և հինգշաբթի, երեկոյան ժամասացությունից հետո, համայնքի անդամների համար կազմակերպվում են հոգևոր զրույցներ:

Եկեղեցի են հաճախում ոչ միայն բազմաթիվ հավատավոր հայորդիք, այլև օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր և զբոսաշրջիկներ:

## Ը. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Տիրոջ ողորմությամբ պետական իշխանությունների հետ մեր Սուրբ Եկեղեցու հարաբերությունները բնականոն են: Անցյալ տարի ևս պետության հետ պարբերական համագործակցությունը դրսևորվել է մշակույթի, տնտեսական ծրագրերի իրագործման ու սոցիալական օգնության բաշխման ոլորտներում: Շարունակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վանքերի, եկեղեցիների ու վանքապատկան կալվածքների վերադարձման գործընթացը:

Եկեղեցի-պետություն փոխհարաբերության շրջանակում շարունակվում են նաև համագործակցությունները՝ հրապարակ... 

Եկեղեցի-պետություն փոխհարաբերության շրջանակում շարունակվում են նաև համատեղ խորհրդակցությունները՝ հրնթացս զանազան օրենսդրական ակտերի ստեղծման գործընթացների. Մայր Աթոռն իր ներկայացուցիչներն ունի ՀՀ Սահմանադրության բարեփոխումների աշխատանքային խմբում, «ՀՀ Խղճի ազատության մասին օրենքի» լրափոխումների աշխատանքային խմբում և այլն: Նշենք նաև, որ ազգային-եկեղեցական զանազան հարցերով զբաղվող հանձնախմբում և այլն: Նշենք նաև, որ ազգային-եկեղեցական զանազան հոբելյանների ու հիշատակությունների առիթով ստեղծվող պետական հանձնախմբերում միշտ ընդգրկվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչը:

## Թ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԵՏ

Նվիրապետական Աթոռների հետ շարունակվել է բնականոն հարաբերությանց ընթացքը: Եղբայրական գործակցության ոգով պարբերաբար զանազան գրությունների փոխանակմամբ մեր Աթոռները անխափան հաղորդակցության մեջ են եղել միմյանց հետ:

## Ժ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաքելության ծիրից ներս իրագործվում է նաև սոցիալական աջակցություն. անցյալ տարի ևս այդ ասպարեզում ծավալված աշխատանքներն իրականացվել են Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի, ԵՀԽ Կլոր Սեղանի Հայաստանյան գրասենյակի, ECLOF-ի (ԷԵՎՀՀՄ), բարեգործական ճաշարանների և «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի միջոցով:

**«Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոն.**

Ինչպես գիտեք, «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի զարգացման հեռանկարները քննարկվում են և հաստատվում Մեր նախագահությամբ գործող վարչական խորհրդի կողմից: «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի գործադիր տնօրենն է Սնակ Ավագյանը:

Ընթացիկ տարում ևս բժշկական կենտրոնը բնականոն կերպով շարունակել է ծավալել իր գործունեությունը՝ անհրաժեշտ օգնություն ցուցաբերելով դիմողներին:

**Սոցիալական ծառայություններ**

2004 թվականի ընթացքում Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակ են դիմել բազմաթիվ քաղաքացիներ: Ըստ հնարավորության, բաժինն արձագանքել է ներկայացված դիմումներին և սոցիալապես անապահով ընտանիքներին ու անհատներին տրամադրել սնունդ, հագուստ և այլ անհրաժեշտ պարագաներ:

Մայր Աթոռի կազմում և Մայր Աթոռի միջոցներով իրենց բնականոն գործունեությունը շարունակել են բարեգործական 6 ճաշարանները՝ Երևանի Մալաթիա ու Արաբկիր համայնքներում, Սևան, Հրազդան և Էջմիածին քաղաքներում: Ճաշարաններից յուրաքանչյուրում օրական սնվում է 200 հոգի: Բացի ամենօրյա սննդի տրամադրումից, կազմակերպվում են նաև հոգևոր-մշակութային փարբեր միջոցառումներ:

Սոցիալական բնագավառում իրականացված ծրագրերում հափկանշական է ԵՀխ-ի Կլոր Սեղանի Հայասփանյան գրասենյակի ծավալած գործունեությունը:

Արդյունավոր կերպով շարունակվում են գրասենյակի կրթական և բարեգործական ծրագրերը: Անցյալ փարվա երկրորդ կեսից գրասենյակի աջակցությամբ իրագործվում է նաև «Հայասփանի հարավում սոցիալական և վերապափրասփման կենփրոնների ծրագիր»-ը, որը ընթանալու է մի քանի ուղղություններով:

## ԺԱ. ԲԱՆԱԿԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Զինված ուժերում, որպես հոգևոր սպասավորներ, իրենց ծառայությունն են իրականացնում 25 հոգևորականներ: Անցնող փարում ՀՀ Զինված ուժերում հոգևոր ծառայության Առաջնորդն է եղել Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Մանոսյանը:

Ընդունված կարգի համաձայն, հոգևոր սպասավորները յուրաքանչյուր ամսվա 4–10-ը ներկայանում են Մայր Աթոռ՝ կափարված աշխափանքների ամփոփման և նոր հանձնարարականներ սփանալու համար:

Անցնող փարում ևս բանակում հոգևոր ծառայության Առաջնորդը պարբերաբար այցելել է զորամասեր և փեղում ծանոթացել հոգևոր սպասավորների գործունեությանը, մասնակցել փարբեր միջոցառումների:

ՀՀ Զինված ուժերում հոգևոր ծառայության Առաջնորդը և նրա օգնականներն իրենց գործուն մասնակցությունն են բերում նաև ՀՀ Պաշփպանության նախարարության և ենթակա կառույցների կողմից կազմակերպված միջոցառումներին:

Բանակի հոգևոր սպասավորությանը զուգընթաց, շարունակվել է նաև ՀՀ քրեակափարողական հիմնարկներում իրականացվող հոգևոր սպասավորությունը, որի պափասխանափուն է Բարեշնորհ Հովհաննես սարկավագ Ռուշանյանը: Ամենշաբաթյա իր այցելությունները Կոշի աշխափանքային ուղղիչ գաղութ շարունակում է արժանապափիվ Տ. Կարապեփ ավագ քահանա Գըլըճյանը:

## ԺԲ. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Համակարգչային բաժինը խնամքով իրականացրել է իր գործունեությունը՝ կափարելով համակարգչային փեխնիկայի և պափճենահանման սարքերի ամենօրյա փեխնիկական սպասարկման աշխափանքները:

Անցնող փարվա ընթացքում բաժնի կողմից կափարվել են Գևորգյան Հոգևոր Ճեմարանի համակարգչային լսարանի ձևավորման, ցանցի կազմակերպման ու ծրագրային փեղադրումների աշխափանքները: Նույնանման աշխափանքներ են իրականացվել նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ինչպես նաև՝ Մալաթիայի Հայորդյաց Տանը:

Կազմվել է Մայր Աթոռի Ճարփարապեփաշինարարական բաժնին անհրաժեշփ համակարգչային փեխնիկայի նախագիծ՝ աշխափանքների արդյունավեփ և արդիական միջոցներով կափարման համար: Ըսփ այդմ՝ կափարավել են երկու գրաֆիկական համակար-

գիչների և մեկ A0 չափի գունավոր փպող պլոտերի ձեռքբերման, ցանցում տեղադրման ու ծրագրային ապահովման աշխատանքները:

Իրականացվել են նաև Մայր Աթոռի հաշվապահության համակարգչային համակարգում ծրագրային փոփոխություններ՝ կապված սոցիալական քարտերի հաշվառման ու դրանցով պայմանավորված հարկային հաշվետվություններում փոփոխություններ մտցնելու հետ:

## ԺԳ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրենն է Արժանապատիվ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: Անցնող տարում Տեղեկատվական համակարգի աշխատակիցները համապատասխան տեղեկատվություն են պատրաստել Վեհարանում տեղի ունեցած ընդունելությունների, Մեր պաշտոնական հանդիպումների, Մայր Աթոռի և Հայաստանյան թեմերի եկեղեցական կյանքի վերաբերյալ, որը էլեկտրոնային փոստով առաքվել է Հայաստանի, Սփյուռքի և արտերկրի լրատվամիջոցներին: Տեղեկատվություն է առաքվել նաև մեր Եկեղեցու թեմակալ բոլոր առաջնորդներին, Սփյուռքում սպասավորող Մայր Աթոռի միաբաններին և այլ անհատների: Հաղորդագրությունները պատրաստվում և առաքվում են նաև անգլերենով ու ֆրանսերենով:

Անխափան կերպով շարունակվել են եթեր հեռարձակվել Մայր Աթոռի երեք ռադիոհաղորդումները՝ Հանրային Ռադիոյով և «Արձագանք» ռադիոկայանով:

Նշենք նաև, որ Տեղեկատվական համակարգի ինտերնետային բաժինը բարեհաջող կերպով շարունակում է Մայր Աթոռի ցանցակայքի ստեղծման աշխատանքները:

## ԺԴ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռի Իրավաբանական բաժինը զբաղվել է պետության կողմից Հայ Առաքելական Եկեղեցուն տրամադրված եկեղեցիների և դրանց հողատարածքների սեփականեցման գործընթացներով, ինչպես նաև Եկեղեցուն անհատույց օգտագործման կարգավիճակով տրված հողատարածքների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման աշխատանքներով: Առաջիկային այս աշխատանքների շնորհիվ կունենանք Հայ Առաքելական Եկեղեցուն տրված վանքերի ու եկեղեցիների 170-ից ավելի սեփականության վկայական, գումարած նաև Մայր Աթոռի վկայականը, ինչպես նաև՝ սեփականեցված հողատարածքների վկայականները:

## ԺԵ. «ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետությամբ գործում է նաև «Շողակաթ» հեռուստաընկերությունը, որը հեռարձակում է «Եկեղեցական կյանք», «Երրորդ հազարամյակ», «Հարցեր քահանային», «Շարակնոց», «Ճամփաներ», «Տոնացույց», «Մանուկների Աստվածաշունչ» և այլ հոգևոր հաղորդումներ, ինչպես նաև՝ մշակութային հաղորդաշարեր, որ կոչված են առավել ամրա-

պնդելու ազգային-եկեղեցական սրբազան արժեքների հանդեպ հավատարմությունն ու նախանձախնդրությունը մեր ժողովրդի հոգում:

## ԺԶ. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մայր Աթոռի գործունեությունն ու իրականացրած ծրագրերը համարժեք արտացոլում են գտել նաև մեր ներքին թեմերում:

### ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Թեմի տարածքում գործում են 21 եկեղեցիներ: Գործող եկեղեցիներում մշտապես կատարվում են ժամերգություններ, ծիսական արարողություններ, մատուցվում է Սուրբ Պատարագ:

Թեմն ունի 98 համայնք, որոնցից հինգը՝ քաղաքային (Երևան, Արտաշատ, Արարատ, Մասիս, Վեդի)՝ շուրջ 1.317.000 բնակչությամբ:

Թեմում իրենց հոգևոր ծառայությունն են իրականացնում 35 քահանաներ և 7 սարկավագներ: Թեմական կառույցներում և թեմին ենթակա հաստատություններում աշխատում են 321 հոգի: 2004 թ. թեմում կատարվել է 8301 մկրտություն և 2822 պսակադրություն:

Ընթացիկ տարում վերանորոգվել է Մալաթիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում գտնվող նախկին մատաղատունը՝ վերածվելով հովվատան՝ իր ուսումնաօժանդակ բաժնով:

Թեմում քարոզչությունն իրականացվում է հետևյալ միջոցներով. Հանրային ռադիոյով յուրաքանչյուր կիրակի հեռարձակվում են «Մանանա» հոգևոր-մանկական և «Շողակն Արարատյան» հոգևոր հաղորդաշարերը: Իսկ ամեն հինգշաբթի «Արձագանք» ռադիոկայանով հեռարձակվում է «Շողակաթ» հաղորդումը: Ռադիոհաղորդումներին մասնակցում են հոգևորականներ, գիտնականներ և երիտասարդաց միությունների անդամներ:

Թեմում կանոնավոր կերպով շարունակվում է հրատարակվել «Շողակն Արարատյան» երկշաբաթյա պաշտոնաթերթը:

Թեմն ունի իր պաշտոնական կայքը, որտեղ ներկայացված են թեմի պատմությունը, թեմական-եկեղեցական կյանքն ու գործունեությունը՝ հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով:

Շարունակում են գործել նաև թեմական Քրիստոնեական Դաստիարակության Դպրոցների, «Հովհաննես Կոգեռն» կրթամշակութային և ՀԵԵՄ-ի կրթադաստիարակչական կենտրոնները:

### ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Արմավիրի թեմում գործում է 14 եկեղեցի, որտեղ հոգևոր սպասավորություն են իրականացնում 24 եկեղեցական՝ 15 քահանա, 4 սարկավագ, 4 ուրարակիր և 1 դպիր: Թեմակալ առաջնորդն է Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը: Թեմական կառույցներում ընդգրկված են 158 աշխատողներ:

Թեմում գործում են 15 կիրակնօրյա դպրոց, Եկեղեցասիրաց երիտասարդների միություն և կրթամշակութային մի քանի խմբակներ:

Թեմում քարոզչությունն իրականացվում է նաև մարզային լրատվամիջոցներով:

ԵՀԽ Կլոր Սեղանի Հայաստանյան գրասենյակի հովանավորությամբ թեմի տարածքում հաջողությամբ շարունակում են իրագործվել սոցիալական ու կրթամշակութային մի շարք ծրագրեր:

Թեմի միջոցներով Արմավիր քաղաքում բնականոն իր գործունեությունն է շարունակում Քանդակագործության խմբակը, որտեղ ուսանում են տարբեր տարիքի ավելի քան 10 աշակերտներ: Քաղաքում և թեմի մի շարք այլ համայնքներում հիմնվել և բարեհաջող գործում են նաև համակարգչային դասարաններ:

«Թուֆենկյան» հիմնադրամի բարերարությամբ Մեծամոր քաղաքում շարունակվել է 20 անապահով ընտանիքների օգնության ծրագիրը և քաղաքի Ս. Ղազար եկեղեցուն կից գործող ուսումնակրթական երկու դասարանների գործունեությունը:

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ

Հայրապետական մեր տնօրինությամբ 2003 թ. հունիսի 26-ին թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ է նշանակվել Հոգեշնորհ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը: Թեմում գործում են 18 եկեղեցիներ, որտեղ սպասավորում են 10 հոգևորականներ, իսկ թեմական կառույցներում ընդգրկված են 88 աշխատողներ:

ԵՀԽ Կլոր Սեղանի Հայաստանյան Գրասենյակի հովանավորությամբ իր հաջող կրթադաստիարակչական առաքելությունն է շարունակում թեմի հովանու ներքո գործող Թալինի թիվ մեկ մանկապարտեզը, որտեղ հաճախում է շուրջ 70 երեխա:

Թեմի առաջնորդարանի հովանավորությամբ գործում են նկարչական, գոբելենի և ժողովրդական պարի խմբակներ, որտեղ հաճախում են ավելի քան 100 երեխա: Թեմում գործում են նաև մի քանի համակարգչային դասարաններ:

Առաջիկայում նախատեսված է բացել նաև ասեղնագործության, մաքրամի, մանրանկարչության, քանդակագործության և փայտագործության խմբակներ:

Թեմից ներս գործում են Օշականի, Աշտարակի, Բյուրականի, Թալինի և Ապարանի երիտասարդաց միությունները, որոնց միջոցով իրականացվում են մի շարք բարեգործական, քարոզչական միջոցառումներ: Այժմ աշխատանքներ են ծավալվում նաև թեմի այլ բնակավայրերում երիտասարդական միություններ ստեղծելու ուղղությամբ:

Հայրապետական Մեր տնօրինությամբ Սուրբ Մեսրոպ Մաշտոց Դպրատունն արդեն գործում է որպես Արագածոտնի թեմի կառույց: Ընթացիկ տարում Դպրատանը կայացել են «Դաշտպան Հայրենյաց» գիտական նստաշրջանը և Մաշտոցյան ամենամյա 6-րդ ընթերցումները:

## ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդը Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանն է: Թեմի տարածքում գործում է 10 եկեղեցի: Թեմում հոգևոր սպասավորությունն իրականացնում է 29 եկեղեցական՝ 10 քահանա, 6 սարկավագ, 13 դպիր, իսկ թեմական կառույցներում ընդգրկված են 103 աշխատողներ:

Թեմն ունի 7 կիրակնօրյա դպրոց, ուր հաճախում է շուրջ 800 աշակերտ: Տարվա ընթացքում հիշյալ դասընթացներին և կիրակնօրյա դպրոցներ հաճախող երեխաների համար կազմակերպվել են ուխտագնացություններ թեմի և Հանրապետության մի շարք եկեղեցիներ ու սրբավայրեր:

Ընթացիկ տարում իրականացվել է «Ջորջ Մազինեսյան» ճամբարին կից մրգատու այգու հիմնադրման ծրագրի՝ պարսպապատման աշխատանքները:

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ թեմի ջանքերով Չարենցավան քաղաքում ձեռք է բերվել մի կառույց, որը սեփականաշնորհվել է և ծրագրված է վերածել Հայորդյաց Տան:

### ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը:

Թեմում հոգևոր սպասավորությունն իրականացնում են 12 եկեղեցականներ, որոնցից 6-ը կուսակրոն և 6-ն ամուսնացյալ քահանաներ են:

Թեմի բոլոր գործող եկեղեցիներում անխափան մատուցվել են կիրակնօրյա Ս. Պատարագներ, կատարվել խորհրդակատարություններ, կազմակերպվել զանազան տոնախմբություններ բազմաթիվ հավատացյալների մասնակցությամբ:

Թեմի ՔԴԿ-ի ուժերով շարունակվում է հրատարակվել «Հայրենիք և Եկեղեցի» մանկապատանեկան ամսագիրը, որն անվճար բաժանվում է թեմի դպրոցներին: Քարոզխոսություններ են կազմակերպվում յուրաքանչյուր չորեքշաբթի Վանաձորի Երիտասարդաց միության համար, յուրաքանչյուր հինգշաբթի՝ Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում հավատացյալ ժողովրդի համար, ամիսը երկու անգամ ՔԴԿ ուսուցիչների համար:

Տեղական ռադիոյով և հեռուստաալիքներով ամեն օր եթեր են հեռարձակվում տոներին և եկեղեցական արարողություններին նվիրված հոգևոր հաղորդումներ:

Անցնող տարում ևս թեմի «Ծիծեռնակ» մանկական ամառային ճամբարում հանգստացել են Լոռու և Տավուշի մարզերի որբ և կարիքավոր ընտանիքների ավելի քան 600 երեխաներ: Թեմի նախաձեռնությամբ նաև բակային հոգևոր ճամբարներ են կազմակերպվել որոշ համայնքներում:

### ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Թեմում հոգևոր սպասավորությունն իրականացնում է 9 եկեղեցական՝ մեկ կուսակրոն և 8 ամուսնացյալ քահանաներ: Թեմական տարբեր կառույցներում աշխատում են 200 աշխարհականներ:

Շիրակի թեմում ևս կատարվել են եկեղեցաշինական որոշակի աշխատանքներ.

Հիմնականում ավարտվել են Աշոցքի եկեղեցու վերակառուցման աշխատանքները: Տակավին մնացել են զանգակատների կառուցման, սալահատակի ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքները:

Ի ցավ սրտի տեղեկացնում ենք, որ բարերարի ֆինանսական դժվարությունների պատճառով դադարել է Ամասիայի եկեղեցու կառուցումը:

Շարունակվում են Գյումրիի Ս. Ամենափրկիչ և Ս. Աստվածածին եկեղեցիների վերանորոգության աշխատանքները:

Անցնող տարվա ընթացքում Առաջնորդարանի հովանու ներքո գործող 10 խմբակներում ուսանել են ավելի քան 500 երեխաներ: Համեմատաբար առավել մեծ թվով սաներ ունեն համակարգչային ուսուցման և պարի խմբակները:

Թեմում իր կանոնավոր գործունեությունն է շարունակում թեմի ՔԴՔԿ բաժինը:

Ամիսը երկու անգամ «Ցայգ» հեռուստաալիքով շարունակվում է կանոնավոր կերպով հեռարձակվել «Եղիցի լույս» կրոնական հաղորդաշարը: Մարզային մյուս հեռուստաալիքներով ևս կանոնավորապես տեսանյութեր են հեռարձակվում Առաջնորդարանի գործունեության մասին: Անխափան շարունակվում է լույս տեսնել թեմի «Ս. Յոթվերք» ամսաթերթը:

Շարունակվում է հանրակրթական դպրոցների և «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստության ծրագիրը:

Հառիճի վանքին կից անասնապահական տնտեսությանն ավելացել է նաև Աշոցքի անասնապահական տնտեսությունը:

Սոցիալական ոլորտում շարունակվում են Կանադայի, ԱՄՆ-ի Արևելյան և Արևմտյան թեմերի, ինչպես նաև Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի հայթայթած միջոցներից նյութական օժանդակության բաշխումը թեմի կարիքավոր ընտանիքներին, որը կատարվում է Առաջնորդարանի միջոցով:

## ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Առաջնորդական տեղապահն է Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը: Թեմում գործում է 9 եկեղեցի: Թեմում հոգևոր սպասավորություն են կատարում 3 ամուսնացյալ քահանաներ: Մեր օրհնությամբ և առաջնորդական տեղապահի գիտությամբ թեմում քահանայագործում են նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի փոխտեսուչ Արժանապատիվ Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանը և Կրասնոսելսկում բանակային հոգևոր ծառայություն կատարող Արժանապատիվ Տ. Ներսես քահանա Շահնազարյանը: Թեմական կառույցներում աշխատում են 13 աշխարհականներ:

Անցնող տարվա ընթացքում թեմի բոլոր եկեղեցիներում կատարվել են ծիսական արարողություններ:

Շարունակվում են որոշակի աշխատանքներ եկեղեցաշինության ասպարեզում: Այսպես՝ շարունակվում է Գավառի Ս. Աստվածածին եկեղեցու տարածքի բարեկարգումը: Վերանորոգվել է Առաջնորդարանի տանիքը, շքամուտքի աստիճանները, սալիկապատվել է Առաջնորդարանի դիմացի ճանապարհը, վերանորոգվել են կանաչապատ տարածքները: Բարեկարգման աշխատանքներ են կատարվել նաև Հացառատ թաղամասի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Աստվածածին եկեղեցիների, ինչպես և հինավուրց Մաքենյաց վանքի տարածքներում:

Թեմի գործունեությունը պարբերաբար լուսաբանվում է «Գավառ» հեռուստաալիքով հեռարձակվող թեմական «Եկայք առ Իս» հեռուստահաղորդաշարով:

Թեմից ներս գործում է Վարդենիսի Սուրբ Աստվածածին եկեղեցու կիրակնօրյա դպրոցը, ինչպես նաև շաբաթական երկու անգամ հոգևոր զրույցներ են կազմակերպվում Ճամբարակ գյուղում:

Թեմում իրականացվում են նաև համակարգչային դասընթացներ:

Թեմի նախաձեռնությամբ պարբերաբար հագուստ և դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով ընտանիքների:

## ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը: Թեմն ունի 20 գործող եկեղեցի: Յուրաքանչյուր եկեղեցի ունի իր ծուխը: Թեմում հոգևոր ծառայություն են իրականացնում 4 ամուսնացյալ և 2 կուսակրոն քահանաներ:

Թեմական կառույցներում աշխատում են 38 աշխարհականներ:

Անցնող տարվա ընթացքում ևս թեմի բոլոր եկեղեցիներում կատարվել են պսակի, մկրտության խորհրդակատարություններ և այլ ծիսակատարություններ: